

Ձեռք գերազանցությունը կը բարենձանէ իմանալ Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքայի օգնական գեներալ Շիրինյանի պաշտօնական հերթումից, որ այդպիսի դէպք բոլորովին տեղի չէ ունեցել Շուշում և խնդրում ենք անմիջապէս հեռախոսով իմացնելք այդ մասին Նորին բարձրութիւն սպարապետին:

Պատգամաւորութեան կողմից՝ Հ. Առաքելեան: 31 օգ. 1905 թ.

Սրանով արքունի կնիքով հաստատում եմ, որ 20 պարսկահայատակ աշակերտների սպանութեան դէպքը Շուշում, վերջին անկարգութիւնների ժամանակ, չէ եղել: Կովկասի ոստիկանութեան կառավարիչ՝

Գեներալ-մայոր Շիրինյան

Մ Ա Մ Ո Ւ Լ

Անշեալ անգամ մենք մատնացոյց արինք, որ ամբողջ կովկասեան հայութեան դէմ գործում է մի հրէշաւոր ինտրիգ: Օր օրի վրա բացվում, արժարժում են այդ ինտրիգի դժոխային հանգամանքները: Պաշտօնական և ոչ պաշտօնական ստախոսութիւնը կատարել օրգաններ է կատարում հեռագրիւնների, ղեկուցումների միջոցով: Յայտնի է, թէ պրօվօկատորի ինչ ստոր դեր է կատարում «Ռուսաց հեռագրական Գործակալութիւնը»: Երբեք է, թէ այդ գործակալութիւնը ինչ պղտելի հեռագրիւններ տարածեց նախ Երևանից Նախիջևանի դէպքերի մասին և ապա, մի քանի ժամանակ առաջ, Բազումից՝ Շուշում դէպքերի մասին: Ամեն ինչ պարզվում է, երբ իմանում ենք, թէ ովքեր են այդ գործակալութեան թղթակիցները Երևանում և Բազումում. դրանք այնպիսի միջոցների դիմող անձնաւորութիւններ են, որոնցից մարգավարութիւն և բարեխղճութիւն պահանջներ անկարելի է: Բայց պէտք է ասել, որ ինտրիգաների, մութ գործիչների դէմ կռուել այնքան էլ անյուսակի բան չէ: Արդէն ամբողջ աշխարհը սկսել է հասկանալ, թէ ինչ միտք, ինչ ձգտումներ ունի մուսուլմանական շարժումը Կովկասում: Եւ իզուր այդ շարժման ղեկավարներն և առաջադիւղ պաշտօնականները ճիշդ են թափում ստերով լցնել աշխարհը: «Русскія Вѣд.» լրագիրը, խօսելով այն մասին, թէ լուրեր են տարածում, որ կոտորածներ սկսողը հայերն են, ասում է.

Այդ լուրը դուրս է գալիս ուսաց պանիստիկովի գլխաւոր շտաբից, որ գտնվում է Բազումում: Մինչդեռ փաստերը, ըստ երեւոյթի, հակառակ են այդ բացատրութեան: Չարքերը մինչև այժմ միշտ տեղի են ունեցել այնտեղ, ուր մասնակիցները ազգայնականութեան անապիտ մեծամասնութիւնն են կազմում: Հազիւ թէ հայերը, եթէ նրանք լինէին յարձակող կողմ, գործէին այդպիսի մի սխալ: Բացի դրանից յարձակումը, չէ հաշուած միայն Երևանի մի հայոց դէպքը, հայերին անպատրաստ դրութեան մէջ էր գտնում: Սկսող կողմը, անշուշտ, չէր յարձակվի մերկ ձեռքերով և զէնքի պատրաստութիւն կը տեսնէր: Յետոյ դանք այն հարցին՝ ինչ է բերում ջարդը մասնակցականներին և հայերին: Մասնակցականները կորցնում են մի քանի տասնեակ սպանւած մարդ, իսկ կենդանի մնացածները ձեռք են բերում շատ հարստութիւն հայոց կողպատված տները և խանութները: Հայերը այնտեղ, ուր ջարդ է տեղի ունեցել, կատարելապէս քարոքանք են լինում, կոտորածից ազատվածները դատապարտվում են սովի և աղքատութեան: Մասնակցականների ձեռքն ընկած կանայք բռնաբարվում են, ամբողջ գիւղեր բռնութեամբ մասնակցականացնում են (Բազումի գիւղեր):

Բազուի ստախոս հեռագրի առիթով «Сѣнь Отчужденъ» լրագիրը գրում է.

Չը նայած ամբողջ Կովկասին յայտնի փաստերին, որոնք մասամբ պաշտօնական էլ վաւերացված են Բազումի և Երևանի դէպքերի ժամանակ, գործակալութիւնների անկողնապահ հեռագրիւններից յետոյ, երեւացին մասամբ գործակալական, մասամբ մասնաւոր հեռագրիւններ, որոնք աղաւաղում էին փաստերը և որոնք դուրս էին գալիս թուրքական խաւանական կուսակցութիւնից, որ խմբված է «Kacmii» լրագրի շուրջը: Այդ լրագիրը հրատարակում է թուրք կապիտալիստների մի խմբակ, որի գլուխն է Հաջի-Չէլեալ-Արզին Թաղիբեկը: Այդ կուսակցութեան աչքի ընկնող ներկայացուցիչները, «Kacmii»-ի խմբագիր Ալի-Մարգան-բէկ Թափ-չիբաշեկ և նոր թուրքական «Հէյաթ» լրագրի խմբագիր Ահմէդ-բէկ Աղաեկ, կամենալով արդարացնել թուրքերին և ամբողջ մեզը բացառապէս հայերի վրա գցել, զարնան և ամառվայ ընթացքում շարունակում էին «Հէյաթ»-ի և «Kacmii»-ի սխեմաներից ազդեցութեամբ զբաղող հայերի դէմ, հարկելով չեղած դէպքեր, ինչպէս, օրինակ, թէ հայերը իրենք ընդհատում են աշխարհի թուրք կանանց, յարձակվել են մայրների վրա, կողպատել են միջինները: Եւ անա այսօր էլ

նկատվում է մի նոր արշաւանք, որ դուրս է գալիս, ըստ երեւոյթի, նոյն այդ խմբակից, որին միայն ձեռնադր են այդ ստախոսները, քանի որ զոքաղը մասնակցական ժողովուրդը իր արեւն քրտինքն է տալիս դրա փոխարէն:

...Շատ կարելի է, որ հայերը թոյլ չը տունի կոտորել իրանց լուս հաւի ձեռքի և պաշտպանվում էին, նոյն իսկ յարձակողական դերը բռնելով Այս հեռագրիւնները, ըստ երեւոյթի, առիթ է տունի թուրք բուրժուականներին աղմուկ բարձրացնել: Դա նրա սովորական տակաւիկն է:

Երկու օրից յետոյ նոյն լրագիրը գրում է իր առաջնորդի մէջ.

Շուշում և Բազումի դէպքերի մեր լուսաբանութիւնը կատարելապէս հաստատվեց և նոյն իսկ աւելի շուտ, քան մենք ենթադրում էինք: Երբեք Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը հերքեց ուսաց գործակալութեան հաղորդագրութիւնը իբրեւ թէ հայերը յարձակվել են թուրքերի վրա և վերաւորել են Գաւազի փոխ-հաւանգապետին: Այս հերքումը հաստատեց և ինքը ուսաց գործակալութիւնը: Աւելին կասեց, «Русскія Вѣд.» լրագիրը հեռագրի մէջ ուղղակի ցոյց է տալիս ուսաց գործակալութեան հեռագրի հեղինակը—Բազումի տեղական գործակալը, «Kacmii»-ի խմբագիր Մարգան-բէկ Թափ-չիբաշեկ:

Գովկասեան Փոխարքայի երէկվայ պաշտօնական հաղորդագրութիւնը և միւս տեղեկութիւնները Բազումից ցոյց են տալիս մի պիտիտ ստախոսի պատկեր: Այս, որ արեւելք ստախոս է երաւելու մէջ, Գաւազի նախագահը դարձել է, առանց որ և է չափազանցութեամբ, Մանջուրա: Շուշում պաշարված է թուրքական ձեռքերի ինքնաշարժով: Ինքը քաղաքը բաժանվել է երկու բաժանի, և տեղի ունեն կանոնաւոր յարձակողական և պաշտպանական պատերազմական գործողութիւններ: Իրարից Բազումի գտնվում է նոյն գրութեան մէջ. պաշարված է թուրք զինուորացիներով, քաղաքի մէջ տեղի ունեն ձեռնառմարտեր, խաղաղ ազգայնականութիւնը ահաբեկված է և սովի մասնակցած, դրբերը, չը նայած իրանց եռանդուն գործունէութեան, թյլ են և նրանց հարկաւոր է օգնութիւն:

Լրագիրը, ինչպէս և առհասարակ բոլոր միւս լրագիրները, գուշակում է անգին ճշգրտաբան արդիւնաբերութեան մէջ և շեշտում է, որ Բազումի իրձակը շուտփում է համառուական շահերը:

Բազում տեղի ունեցած փետրվարեան դէպքերի օրից, որոնք աղբանջան էին այն հրդեհին, որ այժմ բռնել է ամբողջ արեւելեան Ասիայի կողմը, Գովկասի և մայրաքաղաքների առաջնորդ մամուլը և կովկասեան հաղորդակցութիւնը ցոյց էին տալիս թէ որքան յուզել է դրութիւնը և թէ հարաւոր է այն հրդեհը, որ այժմ մենք դիմում ենք ցոյցվելով: Մամուլն էլ հաստատութիւնն է ցոյց էին տալիս, որ երկիրը աղէտից ազատվում միայն միջոցն է միայն հասարակական ինքնագործութիւնը, հասարակական ինքնագործութեան կազմակերպութիւնը և նրան աջակցելը աշխարհային պայմաններում:

Եւ անա այսօր հաստատվում է թէ որքան իրաւացի էր հաւարական կարծիքը:

Դարձեալ մի փոքրիկ պայցոյց Բազումի պրեստաւ պ. Ժգենտի պաշտօնական բարեխղճութեան մասին: «Baz» լրագրում տրգված է.

Կ. Լազարեանը խնդրում է արձանագրել այն անձնաւորութիւնը, որ մտել է պրեստաւ Ժգենտի գեներալին մէջ: Ինչպէս ասում է պրեստաւը, հրաձգութիւն, ի մէջ այլոց, եղել է և Լազարեանի տանը, որ գտնվում է Բիթիկայեան և Մուրկայեան փողոցների անկիւնում: Այդ անկիւնում պ. Լազարեանը տուն չունի, իսկ այնտեղ գտնվող տունը պատկանում է պ. Մուսա Նադիրիին: Իսկ Լազարեանի տունը գտնվում է Բազումի Մուրկայեան փողոցի վրա: Այս տանից ոչինչ հրաձգութիւն չէ եղել, մի բան, որ կարող են հաստատել կեցողները—ինչեք և ուսանելը: Ուրիշ աղբութիւնների պատկանող կեցողները այդ տան մէջ չը կան:

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՊԱՏՄՈՒԱԾՆԵՐԻՑ

(Բալախանու դէպքերը)

Երբորդ օրը զինուորները հրաման առան կենտրոնաւոր Բալախանու բլուրի վրա: Զինուորական վարչութիւնը, երկու, զորքերի սպանաւորը և փոխարքայի զօրավարը լուրջ էր համարում: Վախնաւոր, որ 15—20 հոգիներ խմբակներ կարող են ենթարկվել թուրքերի կատաղի յարձակման և առանձին-առանձին զոհ զնալ, տունց այդ հրամանը: Հաւաքման տեղը նշանակված էր Բազումի սարը, որ մեր հանրեց հազիւ 1/2 վերստ հեռու լինի: Երբ մեր ընկեր զինուորները գնացին, մենք հայերս շարունակեցինք պաշտպանվել և թոյլ

չը տալ, որ Բալախանուց դուրս գան թուրքերը և մեզ վրա յարձակվեն, սիրտ առած այն բանից, որ զինուորները հեռացել են մեզ միջից: Այդ նպատակով մենք զինեցինք խորամանկութեամբ: Մի քանի հոգի դուրս եկանք նախահանքերի շէնքի առաջ և սկսեցինք փոսեր փորել, մեր պարսիկ բանուորներին էլ հաղորդեցինք, որ զգուշ մնան, այդ փոսերը վաղուց չանցնեն, եթէ ոչ նրանք օդը կը ցնդվեն, որովհետև ուռմբեր են թաղված փոսերում:

Մեր համարները լուրը հասցրին Բալախանու թուրքերին և տաւորութիւնը պարզ էր. մեր գաւառի վրանքը սարսափ էին տալիս: Երբ լուրը վրա էր, ինչ արած. վտանգը մարդու խորամանկ և հնարագէտ է դարձնում:

Երբ աղամարդութիւնը այլ ևս չափեց թուրքերին, նրանք զինեցին «նաւարդութեամբ», նենգ ամառութեամբ. երկու բալախանցի թուրքեր, համարում գլխատ հազած, զինուորական և ուղղում էին կրակ տալ, այբել: Բայց այդ լուցկու լոյսի ուղղութիւնով թան հայրեր երկու գնդակները: Դրանք աղմուկեան, արդար իրաւունք ու ճակատի բուռնը ներկայացուցիչ գնդակներ էին... Գող ու աւազակ ձեռքեր չէին նրանց ուղարկողները, և ոչ էլ մարդասպանութեան դաշնակցական տենչով վառված... Երկու հրդեհաձիգները գործեցին և այլ ևս վեր չը կացան:

Մինչ այդ, ոստիկանութեան ստորին պաշտօնականները, որոնք համարեա բոլորը թուրք են, աշտեցին մոլորեցնել թէ զինուորական վարչութիւններին, թէ օֆիցերներին և թէ քաղաքի բարձր ոստիկանութեան տենչով թաղուած և թէ Բալախանու քաղաքի թուրքեր, հայի նման հագնվելով, կրակ են արել զորքերի վրա և իրանց ոստիկան թուրքերի կամ կաշուած արքանաւորների ձեռքով լուրեր տարածել, որ հայերն են զորքի վրա կրակ անում: Այդ ստոր խաղերով թուրքերն իրանց նպատակին հասան:

Չորրորդ օրը զորքերը հրաման ստացան նախնային դէպի Մարտնչի գիւղը: Այդ բաւական չէ, օֆիցերը լուր տարածեց, որ 1500 ձիաւոր թուրքեր Բալախանու վրայ կողմից գալիս են մեզ վրա: Յոյս չունենալով դիմադրել այդպիսի մի հազարի աւազակախմբի և համարված լինելով, որ կը հրդեհեն ու մեզ կայրեն, մենք վճռեցինք չը մտնել հաղաւաւոր կին ու երեխաների արեւելք: Արտասուքն աչքերիս, թողիք մեր բոլոր ստացուածը, մեր հարստութիւնը և համարեա մերկ դուրս եկանք:

Չաքը առկից էր շարժվում, նրանից յետոյ մօտ 2—3000 անգէն բրիտանականներ, իսկ իրենց վերջապէս, հայ կամաւորները: Նախնային ժամանակ վտանգի մեծ մասն ընկնում է վերջապէս, իսկ փոքր մասն էլ թիկերի վրա: Ուստի պահանջներ համարեա միշտ ազատ են լինում վտանգից:

Զարհուրելի էր այդ նախնային 15 տարեի էր ես այդ նախնային աշխարհում էի, բայց այդպիսի նորը (հիսիսի քամի) ամենին չէի տեսել: Մի կողմից հրդեհի բողբոլ, անթափանցելի զօրանքի ձուլը և կրակի հակադրական լիւղուններ, իսկ միւս կողմից անապատից բաժու բերած թանձր փողին, որ կարծես ուղղւում էր ձեռք անցնել մեր մարմնով... Կանանցից մի քանիսը ուղաթափ եղան...

Երբ մեր զինքերից իջանք, բայց դաշտ դուրս եկանք, ոչ մի թուրք չեկանք. 1500 ձիաւորների լուրը դիմաւոր օրինված մի սուտ էր մեզ անգի զինքերից դուրս հանելու համար: Երբ քաղութիւնը չէ օգնում թուրքին, նա դիմում է հրդեհի, երբ այդ էլ չէ օգնում, նա զենք է դարձնում լիտի սուտը: Միթէ այսօր այդ նոյն լիտի սուտը չէ «Kacmii»-ի գէնքը: Սուտը տարածում է նա ինչ գնով կուգէ ինի. կաշառքը նրա կեանքի մէջ ամենամեծ գործունէ է:

Հազիւ մենք քաղաքը վերստ հեռացել էինք, մեր աչքերով տեսանք, թէ ինչպէս Բալախանու թուրքերը սովալուկ գայլերի նման ներս խուժեցին և կողպատեցին մեր դառն աշխարհներ, մեր տաննեակ տարիներ առէ բլուրները արդիւնները: Մի վարչականում 3000-ի չափ մարդ սնանկացաւ, օր հացի կարօտ մնաց: Եկանք հասնել ՍՈՒՅԵ ՄԵՅՅԵ-ի շէնքերի առաջ, Մարտնչի կայարանի մօտերը և այնտեղ ապաստան գտանք: Պէտք է ասել, որ զինքներից առաջ արդէն մի քանի հազար հոգի հաւաքված էին այնտեղ:

Այդտեղ զորքերը մեզ թողին հեռացան: Երբ կիւղը պատեց ամենքին, ինչ կը լինէր, եթէ թուրքերը գային և այդ 5—6000 բրիտանական

ների վրա յարձակվէին: Իսկոյն բոլոր զինաւորված անձերից կազմվեցին պահակախմբեր: Հրացան, ատրճանակ (հին, նոր, պիտանի և անպէտք տեսակների) դուրս եկաւ մօտ 200 հատ:

Ինքները բռնվեցին վարկենարար և պատրաստ կանգնեցին ամեն մի յարձակման դիմադրելու:

Այդքանով չը բաւականաւորով, մանր թըռուցիկ խմբեր կազմվեցին, որոնք հոգեւորը բռնել մէջ առած, արեւելք աչքի առաջ, անյայտացան դժոխքի ձիւրեր ու բողբոլ մէջ: Այդ հերոս երիտասարդների զինված խմբակները վաղուց էին անգէն մնացած, նախադաշտի այս ու այն կէտում փակված բոլոր բրիտանայ անձերին, կանանց ու երեխաներին փրկելու, նրանց առաջնորդելու մինչև ՍՈՒՅԵ ՄԵՅՅԵ-ի շէնքերը:

Անեղանայելի յանգեցութեամբ, քաղաքի հրաշքներ գործելով, նրանք բերին մի քանի խմբեր, աղաւաղվ աղ հարկաւորներ անձերին թուրքի գնդակից և կրակի բողբոլից: Ամենից մեծ խումբ անգէններ բերվեց Երեւանի մօտից, ուր նրանք արդէն շրջապատված էին:

Ամեն անգամ երբ այդ կտրիճները աշտուրութեամբ գալիս էին, մենք մոռանում էինք մեր ցաւն ու դարդը և ուրախութեամբ ծափահարում թիւններ սարքում նրանց, այդ ազատարար հրեշտակներին:

Ինչքան էլ մեր դիմադրական ոյժը զօրեղ լինէր, այնուամենայնիւ մենք երկիւղ էինք կրում, որ շուտով փափուշտները կարող են հասնել... ուստի ինքը անշուշտ կը վերջանայ, իսկ, որ գլխաւորն է, արդէն շուրջ չունենանք...

Իրոքները խիտ լարված ու գրգռված էր: Մեր ուրախութիւնը սաստիկ մեծ եղաւ, երբ տեսանք որ երկուսնաւոր բերին 2 թիւնաօթի Ուրեմն գեներալ-հաւանգապետը հրամայել է նոյն իսկ ամբակով և վերջ գնել խառնակութիւններին, մտածում էինք մենք և համարված էինք, որ Մարտնչի, Բալախանի, Ռամանի, Զաքարթ և միւս մօտակալ թուրք գնդերը, այդ գողերի ու մարդասպանների որշերը ցրել կը արվեն, քաք բարի վրա չեն թողնի նրանցում:

Այդ յուսով մենք բաւական հանգիստ ընեցինք: Բայց մի քանի եղաւ մեր գաղթածը, երբ առաւօտեան տեսանք, որ թիւնաօթիներն ամբարցել են մեր դիմացի թուրքի վրա, բերաններն ուղիղ դէպի մեզ ուղղած... Թիւնաօթիները մի լեզու օֆիցեր, որ պատահաբար էր այնտեղ և ոչ պաշտօնով, և Բազում ամենքին յայտնի հարուստ թուրք Շաբանը (եթէ չեմ սխալվում) Մաշադի Շաբան Ռամադան-օղլին): Այդ երկուսը կանգնել և, երկու, «բարի խորհուրդներ» էին տալիս թիւնաօթիներ օֆիցերին, որը բոլորովին անտեղեակ էր նախադաշտի պայմաններին ու թուրք-հայկական յարաբերութիւններին:

Հիւանդանոցի բժիշկ պ. Շէյնը (հրէայ) իսկոյն գնաց թիւնաօթիներ օֆիցերի մօտ և խնդրեց, որ հիւանդանոցի մօտերից հեռացնէ թիւնաօթի, որովհետև հիւանդները կարող են արտաճաղ լինել և վնասվել թիւնաօթի ձայնից: Իսկ պ. օֆիցերը բարեխղճ օգտախաւսում է բժշկին, որ ոչ միայն չէ հեռացնելու, այլ ուղղակի գետնի հետ է հաւասարեցնել ՍՈՒՅԵ ՄԵՅՅԵ-ի բոլոր շէնքերը, որովհետև այդտեղից կրակ են անում զորքի վրա...

Պարզ երևում էր, որ մեր դրացի Շաբանը կարողացել էր որոշ համազում ներշնչել միւս միտ օֆիցերներին, իսկ ոստիկանութեան մասն ու խոշոր թուրք պաշտօնականները հաստատել էին Շաբանի խօսքը: Թուրքերի համեմաշխութիւնը բրիտանականների դէմ իսկապէս ազդեցուցիչ է չը կայ ոչ մէկը, որ վարակված չը լինի անտեղեկանով դէպի բրիտանականներ... Իսկ գաղտնապահութիւնը հասել է նրանց մէջ հրէշաւոր չափերի:

Մինչ այդ, թիւնաօթի որոտաց: Մի ուռմբ ծակեց դաշտից պատը և ընկաւ դասարանի մէջ, պայթեց ու ամեն ինչ ջարդ ու փշուր առաւ: Երկրորդ ուռմբն ընկաւ դասարանի մէջ, իսկ երրորդը, բարեխղճաբար, անցաւ մեր շէնքերի վրայով և հեռու ընկաւ:

Մենք հասկացանք, որ թուրք սկսան նենգութիւնը այս անգամ էլ կարողացել էր մոլորեցնել իր խառնակութիւններ, խաբել նրանց, թուրքերի արած բոլոր յանցանքները նետել հայերի վրա, նրանց սեղաւոր ցոյց տալ: Այդ տակաւին մեզ շատ լաւ էր ծանօթ: Ամբողջ ոստիկանութիւնը լցված է թուրքերով. սուտ վկայութիւնով ոստիկանութիւնը մոլորեցնում է բոլոր բարձր պաշտանականներին... Յանկարծ

բոլոր օկուպացիաները մի խմբական խնդիր են տալիս, որ հայերն իրանց խիստ են ներգրավում, ուղղում են բոլորին սպանել... Եւ բոլոր խնդրատուները թուրքերն են, կամ նրանցից կաշառված անձեր:

Չանցած մի քանի րոպէ, ստացանք մի թուղթ. մեզ տալիս էին միայն 3 ժամ ժամանակ, որ բոլոր զէնքերն յանձնէինք զինւորական իշխանութեան և ապա զօրքերի պաշտպանութեամբ քաղաքը մեկնէինք, եթէ ոչ — գետնի հետ կը հաւասարեցնեն մեր ապաստանած շէնքերը և մեզ բոլորին կը կոտորեն:

Հասկանում էինք մոլորութիւնը, բայց ձեռքերումս ձաք չը կար: Հնազանդիկները: Բոլոր զէնքերն ամենցինք մի սայլի վրա և յանձնեցինք: Եկաւ մեզ ծանօթ թուրք պրիստարը (Բալխանի գիւղի պրիստարը) և ուղղւում էր 5—6000 մարդու խուզարկել ամեն մէկին առանձին-առանձին: Դա օրեր կը տեւէր: Բարեբաղդաբար մօտակայքում պլանի մի հաւթամբար, հրդեհներ սպառնաց մեզ մօտենալ, բոլորը սարսափեցին և մեզ ազատ թողին:

Կազմակերպով շրջապատված, ծխի ու բոցերի միջով, չը տեսնված նորդի բերանով մեզ առաջն Սարգսի զուգը, մօտ 3 վերստ հեռու հանքերից և դաշտում սպասեցին առկին զինացիներ: Առաջ գնացնելը դալիս էին 1/2 ժամում մի անգամ, իսկ այդ օրը, թաքսի նման, 3—4 ժամում հազիւ մի գնացք էր գալիս...

Մեզ խորհուրդ տուին դիմելու զօրքերի գլխավորին: Եւ և ուրիշ 2 հոգի գնացինք Սարգսի գիւղը մի քանի զինւորով: Թուրք ուստիկաները, որ կանգնած էին այնտեղ, մեզ ներս չը թողին, այն ինչ մեր տեսնում էինք մեր աչքերով, որ թուրքերն ազատ մուտք ունէին նրա մօտ:

Մենք սպասում էինք յարմար առիթի, որ մտնեք գլխավորի մօտ, յանկարծ զինւորները լեզուապառնալ ներս խուժեցին բակը և յայտնեցին, որ Սարգսի գիւղից իրանց վրա գնդակի տարափներ թափեցին թուրքերը... Նրանց խօսքին ոչ ոք ուշք չը դարձրեց, ոչ մի միջոց ձեռք չառնվեց, չը նայեցով որ կազմակերպ, հետեւեցին ու թնդաթնդեցին կային...

Կրկին զգացինք, որ զինւորական իշխանութիւնն էլ կախարդված է. զօրքի վրա թուրքերը գնդակ են բաց անում, ոչ ոք ուշք չէ դարձնում: Մենք հասկացանք, որ այլ ևս միտք չունէր սպանել այնտեղ: Յետ դարձանք և պատմեցինք մեր տեսածները:

Դնացնելը մի քիչ արագացան և երեկոյան մենք արդէն քաղաքում էինք, Բազուրի հայկական մասում:

Աղքատացի, սնանկացի էինք, բայց կեանքերս ազատուի:

Գրիստոնեաների կողմից մարդկային զոհերը համեմատաբար սակաւ էին, բայց նիւթական կատարեալ անակումիւ մի տիպից ամենքին:

Գնացողը հեռանալու ժամանակ անգամ խնդրում էինք օգնելներին այլ ևս մեղանով չը զբաղվել, այլ գնալ միացած թշուառներին, պաշարվածներին օգնելու, նրանք մեզ չէին ուղղում լսել, այլ միտքերն անդուլ էին, որ մնում են մեր մէջ կարգ պահելու...

Անց թէ որ աստիճան ճարտարութիւնով կաշնակել է իր ցանցում թուրք տարրը տեղական բոլոր իշխանութիւնները: Եւ այդ բոլորը այն պատճառով, որ ոստիկանութեան ստորին ու միջին բոլոր պաշտօնեաները թուրքեր են:

Ս. Մ.

ԳԻՒԴԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ

Որ դպրոցը պէտք է մօտենայ կեանքի պահանջներին—դա հազար անգամ կրկնված մի ճշմարտութիւն է:

Որ դպրոցը կենդանի մարդկանց համար է—դա մանկավարժութեան և գիտութեան այբուբենն է:

Բայց, որ յաճախ ուսումնառանական գործի շեղակարները շեղվում են այդ ճշմարտութիւնից, մոռանում են այդ այբուբենը, դա ևս զիտաւ է:

Մամուլի և հրատարակչութեան պարտքն է հազար և մի անգամ կրկնել: Կրկնելը և այս անգամ Գուգէ իզուր չանցնէ:

Այժմ վերաբացվելու են մեր դպրոցները, մեծ մասամբ գիւղական դպրոցներ: Գիւղ և գյուղացի, դպրոց և գիւղ—դրանք պէտք է միմեանց լրացնեն:

Դրագիտութիւնը գիւղացուն անհրաժեշտ է. նրա անհրաժեշտ է գիւղացու համար իր հողը, ջուրը, իր եղն ու կովը, իր ծառն ու

պտուղը, իր աշխատանքի արդիւնքը:

Մեր դպրոցները միմիայն գրագիտութիւն տարածող հաստատութիւններ են:

Գրել, կարդալ, հաշիւ, աղօթել—այս մեր դպրոցների ծուծը. սակայն իր այս ծրագրով դպրոցը հեռու է կեանքից—գոնէ գիւղացու կեանքից:

Ժամանակակից դպրոցը չէ արտացոլում այն կեանքը, որի մէջ նա—դպրոցը ապրում է: Իսկ ինչ է գիւղացու կեանքը:

Վար, ցանք, հոռն, հաղող, բամբակ, կով, եղ, կաթ, հաւ և պարագութիւն:

Երբ է գիւղը իրան լաւ զգում:

Երբ գիւղացին հող ունի, ջուր ունի, երբ նա լաւ է վարում, ցանում, հնձում, ծնում, գինի չինում, բամբակ մշակում, երբ կուշտ են նրա եղները, կովերը գոմէշները—նրա հաւատարիմ ընկերները:

Ուրեմն միայն այն ժամանակ, երբ ուսումնառանքը քաղցի այբուբենից, բացի հաշիւից, գրել և աղօթելից կը հետաքրքրվի նաև գիւղի կեանքով, նա կը դառնայ գիւղական կենդանի դպրոց:

Հակառակ դեպքում դպրոցը—մի խորթ դաւաճ է:

Ուրեմն ինչու չը մտնեն գիւղական դպրոցներին ծրագրի մէջ նաև գիւղատնտեսութիւն: Ի՞նչու գիւղական դպրոցներին կից չունենան, չը ստեղծեն դպրոցական պարտէզներ—սերմնաբաններ, փորձնական դաշտեր, փոքրիկ արհեստանոցներ և այլն:

Ուսուցիչը թող միացնէ գիրը հողի հետ, գրիչը բահի և ուրագի հետ, թող կապէ աշակերտին այն կեանքի հետ, որտեղից դուրս է եկել աշակերտը և ուր մի քանի տարուց յետոյ պէտք է վերագրեալ նրոնք՝ այս անգամ որպէս մէկ, իր հօր օգնական, աշխատանք և ապա որպէս տան և տնտեսութեան տէր գիւղացի: Թող փորձնական դաշտը, պարտէզը, աշխատանքը դարձանք աշակերտի մէջ կտաւրելագործութեան ոգի, ձգտում և օրինակ: Այդ դեպքում միայն կեանքն ու դպրոցը միացած կը լինեն օրգանապէս: Հակառակ դեպքում գիւղը կը մնայ գիւղ, ուսումնառանքը ուսումնառանք:

Չանենք թէ փորձենք—դա փորձված է:

Չանենք թէ դպրոցի գործը բարելավում է:

Թող մեր դպրոցներին ղեկավարները մտածեն այս հարցի մասին: Հաւատացէ՛ք, արժէ այս հարցի մասին մտածել և լուրջ մտածել: Մեր կրթութեան և ուսման ողջ ընդունված ժամանակակից սիստեմը—անժամանակակից է: Դէն գցենք կաղապարը, նա հնացած է:

Պատրաստենք կեանքի նոր ձևեր, կուրս համար նոր զէնքեր: Այդ իրական կեանքի պահանջն է:

Ա. Աթանասեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ

Օգոստոսի 24-ին

Օգոստոսի 20-ին, գաւառապետի կարգադրութեամբ, դուռայի դահլիճում կայացած նախնական ընտրողական ժողով՝ զեմամային գաւառական խորհրդակցութեան մասնակցելուն պատգամաւորներն ունենալու համար: Պէտք էր ընտրել 4 պատգամաւորներ: Նոր-Բայազէտի տարողը գաւառից հրաւիրված էին թէ մուլաբաշները (կալուածատէրեր) և թէ Սալաթի գիւղից լիւսնալի ժողովուրդը: Մեծամասնութիւնը բացակայ էր: Ժողովը նախագահ ընտրեց աստիճանաւոր պ. Կ. Տէ. Սահա-կեանցին, որը, սակայն, ժողովականների հարցախորհրդից—բացառելով զեմամային նշանակութիւնը—բաւականութիւն չը տուեց, ծանօթ չը լինելով զեմամային ծրագրի ու կա-նոնադրութեան հետ: Երկու 10 րոպեան ընթացքում հետեւեցին հետեւի անունները: Երկուսը —պ. պ. Գ. Արծրունի և Կ. Տէր-Սահակեանց և վաճառականներից նոյնպէս երկու հոգի, այն է Զ. Խաչատրեանց և Ս. Փոստոյիսեան: Բացի այդ 4 պատգամաւորներից, քաղաքի կողմից յետագայ խորհրդակցական զեմամային ժողովում ունենալու է նաև իր երկու ներկայացուցիչը, որ ընտրել է քաղ. Բ. Մի-վարդիսեան, այն է պ. պ. Ս. Բաթրիկեանցին և Խ. Բունիաթեանցին:

Այսօր 4—5 օր է, ինչ արեւմտեան տաք քամիներ են փչում, մեծ քանակութեամբ լուրջ մեր կողմից հացաբոյսերին, քանի որ մեղանում հացաբոյսերի մեծ մասը դեռ ևս կանաչ է: Դրութեան մէջ է և տաք քամիների աղբիւրները: Մեծ նիւթաբանում և վախճանում է: Այս տարի, եթէ հացաբոյսը փչանայ որ և է բնական պատահարից, ինչպէս երևում է, մեծ առատութիւն է լինելու, և այդ պատ-ճառով այժմեանից հացի գինը ընկնում է օրէցօր: Աղքատ դասի համար դա մի փոքր մխթարար կ'ընէ:

Եւ, մեծ առատութիւն է լինելու, և այդ պատ-ճառով այժմեանից հացի գինը ընկնում է օրէցօր: Աղքատ դասի համար դա մի փոքր մխթարար կ'ընէ:

Գաւառի գրութիւնը նոյն է, ինչ որ մի քանի ժամանակ առաջ: Թուրք-հայկական յարաբերութիւնները ոչնչով չեն խզվում, չը նայելով, որ հատ. հատ սպանութիւններ պատահել են գնապահ կէտերում: Արհաւ միայն, որ աւար տարած Ռովստեանից մի մասը դեռ յետ չէ բերվել, թէ և պ. գաւառապետը եռանդուն միջոցներ է գործել: Աւար տուած անասնաբէրներն են բասար-գէշարցի Ա. Համբարձումեան (330 գլուխ աւաւար), Վերին-Թեօզալ-Դարայի բնակիչ Բաբեղ Ա. Էտիսեան (800 գլ. ոչխար), ներքին-Թեօզալ-դարցի Կ. Տէր-Մովսէսեան (մօտ 700 գլ. ոչխար), նոր-Բայազէտից Գ. Այիկեանց, Կ. Բաբեղեանց, Խ. Բաբեղեանց, Բ. Նալբանդեան և Տ. Տէր-Միքայէլեան, որոնք ահագին գումարներով քննարկում են, մասնաւոր վեր-ջին երկու անձանց, ինչպէս ասում են, ուղղակի աները բանդիլ են—200 տաւար և 3 ձի անհետ քիչ և տարի են դէպի Զիլվան-շիրի կողմերը, մօտ 5,000 լուրի արժողու-թեամբ: Սակայն էլ յայտնի չենք կտրում և դեռ սպասում ենք տարած անասնաբէրի վերագործման, մասնաւոր որ գաւառապետ պ. Ղորանեան յոյս է յայտնի յետ դարձնելու վերաբերմամբ, թէպէտ շարժման են ան-ցել թաւանի տարած օրերից: Ինչպէս լսում ենք, մեր գաւառի սահմաններում եղած եայ-լապետը թուրք ու քուրդ տարրերը չունեն գէպի իրանց վայրերը: Դրանով գուցէ խոտ-վուրմաները քննարկում են ևս փոքրիկ տար-րը հանդիստ սրտով սկսել իր կալ ու վտարը, որ արդէն սկսվել է ամբողջ գաւառում:

Գ. Սիմանեան

ՆԱՄԱԿ ՀՆԻ-ՆԱԽԻՋԵՏԻՍԻՑ

Օգոստոսի 2-ին

Ներկայումս այնպիսի ծանր պայմաններում է ապրում հայ ժողովուրդը Հին-Նախիջևանի և Շարուրի գաւառներում (միւս գաւառներին ակնհայտաւ չենք եղել), որի դառնութիւնը և սարսափը կարող է զգալ միայն նա, ով ան-ձամբ է տեսնում, ով իր վրա է փորձում այդ դրութիւնը: Ժողովուրդի կեանքը անտանելիութիւնը գիտում է չափից նկարագրված համա-ձայն: Պէտք է տեսնել կողպուած և հրդեհ-ված գիւղերը, որոնց մասին կարող է գաղա-փար տալ Ուլիստեանցի գիւղը, որը արքու-նական ճանապարհի վրա լինելով՝ շատերին ծանօթ է և աչքի առաջ է. չեն կարծում գնալի մի մարդ, որը առանց սոսկումի անցնէ այդ տեղով և որի կողմից յուզմունքից չը սեղմվի, տեսնելով թշուառութեան գերել նետ-ված այդ ժողովուրդին, որը այժմ ապրում է ժայռոտ մի բլրի լանջի վրա կողպուածից ա-զատված փախստի մեկ, մասնավոր արե-գակի այրող ճառագայթներին, գուրկ անդից: Յիշում եմ, երբ բժիշկ Պապեանը հետա-քրքրվում էր նրանց մոտեցի մասին, նրանք գնալուց մի քանի րոպեից ազատվել են հարուստների մի քանի կովեր և գիւղի հիւանդները չեն կարող օգտվել նրանց կա-թից և մածուկից: Այդ բլուրից նրանք նայում են իրենց հրդեհված բնակարաններին, որոն-քից միմիայն ծուլից սևացած պատերն են մնացել: Այդ փախստիները պահպանում են հաւատարիմ շինքը, պառկած պղծած տների դռներին, մայլ, անշարժ նայում են անցնող-ներին: Երբ նրանք էլ են հասկանում, որ կա-թիք չը կայ անհասկանալու, քանի որ ո-չինչ չէ մնացել պահպանելու:

Նոյնպիսի պատերի ներկայացում են միւս հրդեհված գիւղերը, միայն դրանց մեծամաս-նութեան բնակիչները ապաստան են գտել մի աւելի ապահով հայ գիւղում, թողնելով իրանց դաշտերը, այգիները անխնայ, մասնավոր ա-ւարի և ոչնչացման: Դրեքմանային ապաւո-րութիւնն են թողնում այդպիսի աւերված գիւղերը, ուր ոչ մի ձայն չէ լսվում, ոչ մի կենդանութիւն չէ երևում:

Ոչ պակաս յուսահատական է և այդ խեղ-ճերի դրութիւնը. միայն իրանց կեանքը ա-զատելու համար 5—6 հիւրի ժողովուրդը կու-րծել ենք: Այս թողնում այդպիսի աւերված ներքի, քաղցի, հիւանդութիւնների մահաւախ-րում, ուր վեց գիւղի բնակիչներ են ապա-ստանած, իւրաքանչիւր ընտանիքում գետնի-ված են 3—9 ընտանիք: Զիշտ է, թէ և Խա-նալի Շիմաճումը և մի քանի այդ տեսակ գիւղեր չեն թաւանված, բայց ընդհանուր թշուառութեան դրանք էլ են կենթարկված. մի

կողմից ընդհանուր սարսափի տակ նրանք չեն կարող ազատ դուրս գալ դաշտ և հաւա-քել իրանց բերքերը, որից հազիւ մեծամեծ գոհերով 1/2 մասն են հաւաքում, միւս կողմից նրանք իրանց ունեցածը սպառում են՝ սովից ապաւիտելու իրանց դժբախտացած արեւակից հարկանքներին: Այդպիսով բայցայիւ են թէ հրդեհված և թաւանված գիւղացիները և թէ կողպուածից ու հրդեհից ազատ մնացածները:

Անորոշ, յուսահատական դրութեան մէջ են գտնվում և Նախիջևան քաղաքի հայերի կողքերի են ունեցած-չունեցածը, շատերը օրվայ հացի են կարօտ, չունեն մի որ և է միջոց իրանց գո-յութիւնը շարունակելու, որ և է աշխատանք, դործ չը կայ, կանգնել է առևտուրը, վաճա-ռականութիւնը, եկամուտի բոլոր աղբիւրները փակված են դրանց առաջ: Նախիջևանի և նրա գաւառի հայը այնպիսի անասնական ծանր հարուած կրեց, որ հազիւ մի քանի տա-նակ տարիներում նա կարողանայ ոտքի կանգնել: Նախիջևանցին առաւօտից մինչև երեկոյ անգործ թափառում է կեկղեցու բա-կում, կարծես աւելի ևս սարսափելի աղէտ-ները սպասելով: Ազատված են 3—4 մանրա-վաճառների խանութներ, եկեղեցու բակում ծախում են ամենամանրամեղ ապրանքները և ուտելիքները:

Պաղարից հեռացել են շատերը, այն ունե-ւորները, որոնք կարող են ուրիշ քաղաքնե-րում ապրել: Դրանց հետևում են և մնացած-ները. եթէ մի փոքր էլ այսպէս շարունակվի, քաղաքը կը դատարկվի հայերից: Այգիները և հողերը համարեա երեսի վրա ընկած (չեն վստահանում մնալ այգիներում) յանձնված են թաւրերին, որոնք տարի են տեղում այն-քան, որանց ցանկանում են: Բաւական է այս-պէս շարունակվի մի տարի, և հողերը դուրս կը գան հայերի ձեռքից:

Գաղթը սկսված է և շարունակվում է գիւ-ղերում: Առանց այդ էլ այս գաւառի բո-լոր գիւղերում (շատ չնչին բացառութեամբ) աղաւաղելի, աշխատող ձեռքեր շատ քիչ կան, բոլոր օտարներն անցնում են: Այս դեպ-քից յետոյ արդէն մեծամասնութիւնը աչքը ձգել է դէպի Ռուսաստան, ձգտում է ընդմիջա-հեռանալ իր բնակավայրից: Տղամարդկանց բացակայութեամբ կարելի է վերադառնալ, որ աղէտների ժամանակ այս գաւառը աւելի շատ առաւօտից և այն էլ առանց որ և է դիմադրու-թեան:

Դիւղերի դատարկման լաւ օրինակ կարող է ծառայել Թաւուր գիւղը, որը ունի 130 տուն հայ. այժմ այդ գիւղում մնացել են 35—40 տուն, որոնց մեծ մասի տները այրված են և կողպուած: Շատ քիչ գիւղ կը գտնվի Կով-կասում այնքան բարեկեցիկ և լաւ պայման-ներում, որպէս Թաւուր է. բարեբաղ, լաւ հո-ղեր, որոնց կէտ համարեա գիւղացիների սեփականութիւն է կաղում, այգիներ, սե-փական ջուր երեք տեղից—և այս բոլորը այժմ անխնայ, երեսի վրա ընկած է առանց տիրել: Բամբակի արտերը առանց քաղահանի մնացած, ոչնչացել են, գիւղացիին այլ ևս դրանց մասին չէ մտածում: Որ գիւղ մտնում է, որ գիւղացուն համոզում էր թողնել գաղ-թելու միտքը, նա միայն երկու պահանջ է դնում. վերադառնալ գաղթածներին և ապա ինք-նապաշտպանութեան միջոց: Թաւուրում ժողու-վրդի տուալին պահանջը եղաւ. «Վենք ինչ պար-ստական ենք մեր արեւմտի պահպանելու մեր հարեաններին տները, ընտանիքը, կալուածները, որոնք նստած են ապահով քաղաքներում և ոչ մի հետաքրքրութիւն էլ չեն ցոյց տալիս դէպի մեր վեճակը, ոչ մի օգնութիւն չեն հասց-նում մեզ. վերադարձէ՛ք նրանց և տուէ՛ք մեզ ինքնապաշտպանութեան միջոցներ, մենք կը մնանք, ապա թէ ոչ, մենք չենք կարող ոչխա-րի նման մորթվել: Ընդհանուր դրութիւնը այնպէս է, որ գիւղացին թէ քաղաքացին բօ-պէ առ քապէ սպասում են նոր աղէտների, և սպասում են սարսափելով:

Փորձ արվեց և նոյն իսկ մի քանի միջոց-ները ձեռնարկվեցին կանգնեցնել դաղթը, բայց այդ աղողութիւն չունեցաւ: Հարկաւոր է ընդհանուր աշակցութիւն, լայն միջոցներ դրա առաջն առնելու, ապա թէ ոչ մի ամբողջ գա-ւառ կորստի անդունդի ծայրին է գտնվում: Թող դործ դնէ դրա դէմ մաքառելու ամեն մի անհատ, ինչ որ կարող է: Հրաւիրում ենք Թիֆլիսում կազմված յանձնաժողովներին և մամուլի ուղարկութիւնը այս կրիտիկական դրութեան վրա: Միայն աղիւր ուղարկելով գաւառը չէ փրկվում:

Սիր. Գրիգորեանց

ԶԱՅՈՒՆ գեւղից (Նախիջվանի դաւառ)
 իբ գրութ ԵՆ. ՎՐԵՃԻՆ անտանելի և տխուր
 Ե. Վահկեցի տառապեալ հայերի տանջալից կ
 քԷ, այնու ամենայնիւ դժուար է գրելով
 անք բազբել նրանց այն ցնձութիւնը, երբ եկ
 Յ. ցախկան և դպրոցական կալուածները վ
 դարձման լուրը կայծակն արագութեամբ
 փառնցից Զահկի հայկական մասերի աւե
 ների մէջ: Չը նայած իրանց անել դրու
 Ու. նը, Վահկեցիները մաղթանք կատարեցի
 դոտառոսի 7-ին իրանց կողողոված ս. Աստ
 ծածին եկեղեցում խուռն բազմութեան և
 դական զինուորները ներկայութեամբ, բ
 մարտիկուն թաղաւոր եպարքին, Վեհափառ

բազմաթիւն և կովկասի Փոխարքային երկարա-
կեցութիւն: Եւ որպէս երեսնամեակ անտու-
ցում, հայերը եղբայրական ճաշ պատրաստե-
ցին տեղական զինուորներին համար: Բացի զը-
րանից տեղական մի քանի ինտելիգենտ ան-
ձինք ճաշի հրաւերեցին զօրքի կապիտան
Մախարիւկին և տանուտէր Սաքինովին, որի
ժամանակ կենացներ առաջարկեցին: Չին-
տերները բաղկացած երգեցիկ խումբը զուգ-
ընթացօրէն երգում էր բաւական գեղեցիկ և
ներգաշնակ երգեր: Ի ցնծութիւն բոլոր հանգի-
ւաններին զինուորները շարքը մի քանի ան-
գամ հրացաններ պարպեց օդի մէջ: Ընդհա-
նուր ուրախութիւնը կատարեալ էր: Նոյն օրը
մի և նոյն ձևով զոհուեալութեան մաղ-
թանքներ կատարեցին Շիւսանուր, Գիւլիս-
իայ և միւս գեղեցիկները: —

ԵԱՐՄԱՅԻՑ գեղից (Նախիջևանի գաւառ)
մեզ գրում են. «Գաղափարողի սպանութիւննե-
րը մեզանում սկսվել են կրկնվել յաճախ: Օ-
գոստոսի սկզբներում երեք հոգի զազանչեցի
հայեր—Օհաննէս Հայրապետեանց, Ռուստամ
Աւագեանց և Տիգրան Գեորգեանց Նախիջևան
գաղով պատահում են 6 հոգի թուրքերի ի-
րանց հարևան Նահալիք գեղից: Վերջինները
առնառում են համոզել հայերին միասին ճա-
նապարհվելու դէպքի դէմ: Հայերը հասկանա-
լով թուրքերի նենգամիտ ծրագրերը, քաղաքից
վերադառնալիս գիշերում են մեր գեղում և
մի օր ճանապարհից յետ մնում: Հետեւեալ
օրը նոյն Նահալիք գեղի թուրքերը, բռնե-
լով արդէն ճանապարհված հայերին, վայր են
իջեցնում ձորը և խնայող սոսկալի տանջանք-
ներով մահացնում: Ժանապարհին հայերը քա-
ղաքից դնած գեղօրայքի ամանները շարքում
են, նաւթի թիթեղեայ տակառը մի կերպ
ծակում, ժամացոյցի ժապաւնէր կտրաւորում,
որպէս զի դրանով հնար լինի ազգականներին
իրանց գիւղերը գտնելու: Երկուր որոնելուց
յետոյ յօշոտված դիակները գտնում են մի
ժայռի տակ գցած, իսկ Տիգրանի դիակը ան-
հետ կորչում է, գտնում են միայն նրա չուխէն:
Սպանվածներին հետ լինում են երկու ձի և
այլ տնային մանր իրեր: Յանցաւորները ան-
յայտ են: Այդ դէպքից յետոյ Նահալիքի
թուրքերը այդ խօսքերով են պատասխանում
հայերին, «հը, խոս մենք մեր վրէժի ծարաւը
շարունակ յազնայում ենք և յանցաւորներին
երբեք չենք գտնում»: —

ԱՆԱՆՏԱՆՈՒՅԻՑ մեզ գրում են. «Տեղիս ա-
մենաբարեալ հարցը զինուորային ներկայացու-
ցիչներ ընտրելն է: Շատ ժամանակ չէ, ինչ
որ մեզանում լսվում է «զինավոր» բառը, շատ
ժամանակ չէ, ինչ որ պաշտօնապէս յայտա-
բարկեց մեզանում այդ մեծ աւետիքը, բայց
ժողովուրդը, նոյն իսկ գեղական ամենայնե-
տին խաւերն արդէն որոշ գաղափար ունեն
այդ նոր կանոնադրութեան մասին, գիտեն,
որ զինավոր ոչ այլ ինչ է, եթէ ոչ—ինքը
իր ընտրած մարդկանցով իրան կառավարելու:
Արդէն երեք գեղական համայնքներում ժո-
ղովներ եղել են և ընտրել են ներկայացու-
ցիչներ: Համարեա բոլոր ժողովները մէջ էլ
արձանագրութիւն են կազմել հետեւեալ բո-
վանդակութեամբ. «Անգամում զինավոր օգ-
տակար կը լինի միայն այն դեպքում, երբ կը
սովի մանր զինավորական մարմին (мел. вооружен-
н.) և երբ միայն ճիշդ օգտագործվում, ընդ-
հանուր եւ հաւասար ձայնաւորութիւն կը լինի
եւ խօսքի, ժողովների ու մամուլի ազատութիւն
կը ընդունի: Համարեա նոյն բովանդակութեամբ
արձանագրութիւն է կազմված և քաղաքային
ուղարկւում իրաւասուններին ձեռքով: Գաղա-
քից ընտրված են 3 հոգի՝ քաղաքապետ Գ.
Մովսէսեանց, բժիշկ Այվազեանց և նոտար
Բուդուկեանցը: —

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մեր նահա-
նական վարչութեան առաջարկութեամբ ամսիս
23-ին ու 24-ին մեր գեղական համայնքները
ներկայացուցիչներ ընտրեցին Գանձակում
կազմակերպվող զինավորային խորհրդակցու-
թիւններին մասնակցելու, որոնք սկսվելու են
ամսիս 28-ից: Մեր գեղական ժողովուրդը
որի անտանալան դրութիւնը շատ անմիթա-
ր է, մեծ յայտն ունի դրած զինավորային հա-
տատութիւնները վրա: —

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Գանձակի հա-
տարակութիւնը որոշել է օգոստոսի 29-ին մեծ
հանգիստը: Դրանով ամեն ինչ օրվայ զոհե-
րի յիշատակը, զոհերի, թուով ու թի հոգի, որոնք
ընկան 1903 թ. օգոստոսի 29-ին ս. Յովհան-
նէս եկեղեցին՝ այդպիսով պաշտօնապէս հե-
րու համար Բ. Դրան և էկզարքոսութեան
մէջ և լարված յարաբերութիւնները լուրերը:
ԲՆՐԼԻՆ, 30 օգոստոսի: Երեւոյի հիւան-
դացողները ընդհանուր թիւը 161 է. մահվան
դէպքերը 58 են:
ԼՂՆԴՈՆ, 30 օգոստոսի: Տօկիոյ հեռագիրը
վկայում է, որ ծովագետ Տօկի Փլագմանեան
զբաւակիրը այրվեց և ջրի տակը գնաց: «Մի-
կազ» զբաւակիր հետ միասին, որի վրա ծա-
ծանվում էր Տօկի զբաւակիր, սպանվեց 599
մարդ կոմանդայից: Յայտնի չէ, թէ ինչն Տօկի
արդեօք գտնվում էր նաւի մէջ: Մանրամաս-
նութիւններ չը կան: Կարծում են, որ զբա-
ւակիրը դիպել է ստորջրեայ ականին:
Կացուրայի մինիստրութիւնը հրաժարականի
խիղիւրը տուեց, մասնագործը անելով այդպիսի
մի քայլի անհրաժեշտութեան վրա, Տօկիում
պաշարման դրութիւն մտնելու և ծագած
յուզմունքների պատճառով: Միկազն իր պա-
տասխանի մէջ խորհուրդ էր տալիս կարէն-
տին մնալ և կատարել իր պարտաւորութիւն-
ները:
Երեւոյի Տօկիում ամբողջ ց ց ց սարքից
հաշտութեան դէմ: Տեղի ունեցած ընդհա-
նում ոստիկանութեան հետ: Յիսուսից աւել
վերաւորներ կան:
Նիի-ԵՐԿ, 30 օգոստոսի: Վիտտէ ուղար-
կում է «Յէյզլը Վիլհելմ» շրջանակով:
31 օգոստոսի
Նիի-ԵՐԿ, Հաշտութեան կնքելու յիշատա-
կին Վիտտէն անկեց Վաշինգտոնի գերեզմանի
մօտ մի ծառ, որի ընծիւղները ապագայում
կուղարկվին Ռուսաստան:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Լրագրական տեղեկութիւն-
ների համաձայն, գերեզման Սվետլոյի հետ
միասին նաւթային շրջանը այցելող «Տօկոյ»
վրէժիւր լրագրի թիթեղեայ հեռագրում է
Պետրովսկից, թէ ընդհանուր ֆուտը 80 միլիո-
նից աւել է: Շատ նաւթահանքեր անֆուտ
են մնացել: 14,000 օտարաքաղաքացի հայեր
պատասպարվել են Բագու: Ռուս բանուորները
ամբողջովին թաղնվում են թուրքական մա-
սերում: «Գրաւոր» թիթեղեայ թիթեղեայ հաշտարկի
Մեղիւրսկին, «Նաւա ժիզն» թիթեղեայ խօսքով,
հեռագրված է ժողովրդական լուսաւորութեան
մինիստրութիւնից, որտեղ հայրում էր ծառա-
յութեան մէջ 32 տարի: «Մօսկովսկի Վէդո-
մօստի» լրագիրը անցնում է Իւլյայսկոյ:
Նիի-ԵՐԿ, 30 օգոստոսի: Վիտտէն մեկնեց
այսօր ցերեկը, իրենով շրջաբերականով ա-
մերկական ժողովրդին, որին յայտնում է
շնորհակալութիւն հիւրասէր ընդունելութեան
և ուշադրութեան համար: Կոմսերան հիւանդ
է: Վիտտէն հրաժեշտի ողջոյնով ընդունվեց
Տակախիթայի կողմից:
ՏՕԿԻՆ, 30 օգոստոսի: Ազգը դեռ ոչինչ չը
գիտէ «Միկազ» զբաւակիր հետ պատահած
զբաւակիրութեան մասին: Լրագիրները չը
հրատարակեցին տուածին յաւելուածներ: «Մի-
կազ» զբաւակիրը զբաւակիրութեան մասին
յայտնի է միայն այն, որ հինգ հոգի սպան-
ված են, 348 վիրաւորված և 251 հոգի ան-
յայտ կորել են: Միկազն դեռ չէ ընդունել
ներքին գործերի մինիստրի հրաժարականը:
Նիի-ԵՐԿ, 30 օգոստոսի: Վիտտէն կիշնէ
շրջանակից Երեւոյից գտնում և կը գնայ Պարիզ,
ուր կը տեսակցէ Բովիլէի հետ, իսկ յետոյ կը
գնայ Պետերբուրգ:
ՀՈՒՄ, 30 օգոստոսի: «Տրիբուն» հրա-
տարակում է հեռագիր Տեանիին, որով հա-
ղորդվում է լուր, թէ Եւպոնիայում վերակալել
են անկարգութիւնները և թէ Կոմսերայի ընտա-
նիքի բոլոր անդամները սպանված են: Այդ
լուրը սակայն չը հաստատվեց:
Կ. ՊՈԼԻՍ, 30 օգոստոսի: Կարմիր թիւն
դեսպանը պահանջում է վարձարութիւն
Փրանսիական մի հաւատակի ապօրէն կալա-
նաւորման համար: Անգլիական դեսպանու-
թիւնը նոյնպէս պահանջում է հատուցում այն
նաւերի համար, որոնք կողոպտվել են արաբ-
ներից Տօկիայում, և որոնք կրում էին
անգլիական դրոշակ:

Բժիշկ Բ. Ա. Պապոյեան
Վերադարձաւ արտասահմանից և վերականգն հի-
ւանդները ընդունելութիւնը: Մասնապէս ըթի,
կողորդի և ականջի: Տեղեկաց 1 ից մինչև
2 ժամը, երեկոյան 5—7 ժամը:
Հասցէն Միքայէլեան փողոց, տուն Ֆօրէրի,
№ 157. (ա.օ. յ. օ.մ.) 2—10

Բ. Ժ. Շ. Կ. Ա. Պ. Ե. Տ.
Գ. Ա. ՀԱՄԱԿԻՐԻՍ
Մասնապէս միջալին և սիֆիլիսի բուժական
հիւանդութիւնները, ընդունում է հիւանդնե-
րին առաւօտեան 12 ժ.—1 ժ, երեկոյան
6 ժ.—9 ժ.: Կուկիա, Սեւեռնոյկայա փ. № 20.
(Կ. Կ. Կ.) 8—30

Ա. Տ. Ա. Մ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ.
Ս. Գ. Շերտաւանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօ-
տեան ժամը 9—2 և երեկոյան ժամը 3—6,
Երեւանի հրապարակ, տուն Արդութեան,
Երեւանի Լալայեանց բնակարան:

ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՄ
Սօֆիա Ի. Գեորգիւսով-Լօկ
Տեղեկութիւն և Կանչակայի փողոց № 7,
տուն իշի. Թուսնովայի, Ալեքսանդրեան ալ-
գու դիմացը: (Կ.Կ.Կ.) 38—100

Հ. Բ. Ա. Ի. Ե. Բ.
Տափի-Թաղի սուրբ Գեորգ եկեղեցու ծխա-
կան երկրորդ ժողովը նոյնպէս չը կայացաւ:
Այլքի առաջ ունենալով խնդրի լրջութիւնը,
հրաւիրում են Երեւոյ անգամ կիրակի օրը,
սեպտեմբերի 4-ին, վիճակային կոնսիստորիա-
լի դահլիճում, ցերեկայ ժամը 12-ին, յոյս
ունենալով աւելի բազմաթիւ ժողովով կա-
տարել արժանաւոր ընտրութիւն:
Միւսան Տափի-Թաղի ս. Գեորգ եկեղեցու
Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեան

ԴԱՍԱԳՐԱՐՔԵՐ ԿՐՈՆԻ
Յատկապէս պատրաստած պետական դպրոց-
ների համար, (թղթաւորված հոգևոր և ուսում-
նարանական վարչութիւններից) աշխատասի-
րութիւն ճշգրիտ աւագ քահ. Երեւանի:
I. Առաջին գրքի, պատրաստական դասա-
րանների համար «Գիւրաւոր» աղօթքները (Ե-
րանց բացառութիւններով) և տանիքի հա-
մառօտ պատմութիւնները 5-դ աղ. գրքին է
20 կօպէկ:
II. Երեւոյ գրքի, «Հին-ուխտ» (30 դաս-
երի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյա-
կան դրոյցներով հանդերձ) 3-դ աղ. գրքին է
30 կօպէկ:
III. Երեւոյ գրքի, «Նոր-ուխտ» (32 դա-
սերի վերածած, ուսուցչի կրօնական—բարո-
յական դրոյցներով հանդերձ) գրքին 30 կօպէկ:
Գրականութեան և ուսուցչի համար 300%
գինով, առանց ճանապարհածախքի: Դիմել՝
Тифлисс, прот. Евнуе Евзиковичъ կամ
Тифлисс, Центральный книжный магазинъ.
(Կ.Կ.) 15—25

Դպրոց եւ Պանսիօն
ՅՈՎԱ. ՄԵԼԻՔ-ՉԱՆԵԱՆՈՒ
Ընդունվում են գիշերօթիկ և երթեկ աշա-
կաններ: Պատրաստվում են բոլոր միջնա-
կարգ դպրոցները մտնելու համար: Նոյնպէս
ընդունվում են գիշերօթիկ և այն աշակերտ-
ները, որոնք արդէն սովորում են միջնակարգ
դպրոցներում: Աւանդվում են ուսուցիչ, հա-
յերէն, գերմաներէն, ֆրանսերէն և լատինե-
րէն լեզուները: Հասցէն Тифлисс, Гавовская
улица № 7 (7,9,11,14,16,18,21,23,25,28,30.
ս. 1,4,6,8) 12—15

Поступили в продажу новые книги
Характеристики и воспоминания
Г. Туманова.
ч. 2-я
Содержание: И. И. Свѣдѣнцовъ (Ивановичъ).—В.
Л. Величко.—Макс. Горький на Кавказѣ.—Габр. Сун-
дукянцъ.—А. Пагарили.—Еще объ А. Казбекѣ и З.
Антоновѣ.—Д. Ведробисели.—Абг. Иоаннисиани.—И.
Е. Питооевъ.—С. К. Зубаловъ.—П. Умиковъ.—А. Т.
Нанейшвили.—Кн. Н. Д. Мингелеский.—Итоги не-
давняго кавк. управления (кн. Голицынъ).—Изъ те-
атральныхъ воспоминаний.
ц. 50 коп.
Կъ введено земскихъ учреждений на
Кавказѣ.
Материалы, собр. Г. Тумановымъ.
ц. 20 коп. 3—3

Արտանակ քաղաքի հայոց եկեղեցու
համար հարկաւոր է երե-
տասարդ տիրացու հետեւեալ պայմանով 150
րուրի ոսկի և 250 րուրի արծիւ:
Հասցէն Армянскъ, Тавр. губ., Ктитору
Каприэлу Мазлумянцъ. (Կ. Կ. Կ.) 2—3

նէս եկեղեցու բակում եկեղեցական կալուած-
ների գրաւման ժամանակ:
—
Բազուի և Շուշու ֆեաւած հայերի օգ-
տին ստացանք Մահալ քահ. Տէր Յովհաննէ-
սեանի ձեռքով Ն. Բաբեանցի հոգեհացին հա-
ւաքած 13 րուր. 82 կ.: —

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ
ՌՈՒՍԱՅ ԳՐՈՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ
28 օգոստոսի
ՏՕԿԻՆ, 28 օգոստոսի: Դաւաղեցրված է լը-
րագիրներին հրատարակութիւնը և օտար հե-
ռագիրներին խիստ ցնցուրան շարունակվում
է: Հաղորդում են, որ Նօգի և Նօգիու գինե-
րալիները հրաժարական են տուել:
ԿԱՆԵԱ, 28 օգոստոսի: Սկսվեցին պարլա-
մենտի նիստերը: Մտցրված է ծրագիր կազ-
մելու համար քաղաքային միլիցիա 1200 հո-
գուց, կարգ պահպանելու համար:
ՏՕԿԻՆ, 28 օգոստոսի: Լուր է պատում, որ
ներքին գործերի մինիստրը հրաժարական
տուել: Օտարագիր դեսպանութիւնները այլ
և չեն պահանջում զօրքերով, որովհետեւ
այն համոզմունքը կայ, թէ հիմը չը կայ վա-
խենալ, որ անկարգութիւնները կը վերակալեն
և քրիստոնէական եկեղեցիներին վրա յարձա-
կումներ կը լինեն:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 28 օգոստոսի: Չինական
դեսպանութիւնը յայտնում է, որ Չինաստա-
նում կը կազմվի առանձին յանձնաժողով ու-
րոշելու համար այն ֆուսները, որ պատերազ-
մական գործողութիւնների ժամանակ կրել են
չինացիները, չինական հողի վրա: Այն դէպ-
քում, երբ պատերազմող կողմերը կը հրա-
ժարվին վարձարութիւն վճարելուց, Չինաս-
տանը կը դիմէ Հաագի դատարանին:
Կ. ՊՈԼԻՍ, 29 օգոստոսի: Գնացել մեկնե-
լուց մի քանի րօպէ առաջ յայտնվեց, որ
տօրածոները վատ են գործում: Ինժեները
սկսեց հեռագրօտել պատճառը և գտաւ վազօնի
տակ թաղնված մի մարդ: Անյայտ կալանա-
ւորվեց: Նա դուրս եկաւ բոլորացի Մակեդո-
նիայից: Սուլթանը շնորհեց ինժեներին 10,000
ֆրանկ:

30 օգոստոսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Պետական հաշեցուցակի մէջ
1906 թւի համար մտնում է համարեա երկու
միլիոնի կրէդիտ Դոմայի և նրա դեւանատան
ծախսերի համար:
Լուր է պտում, որ արդարագաւտ թեան
մինիստր Մանուկին թողնում է իր պաշտօնը
և նրա տեղ Նախակովում է մինիստրների կօ-
միտէի գործերի կառավարիչ Նօգի:
Ներքին գործերի մինիստրը առաջադրու-
թիւն արեց Սեւաստի՝ վերացնել նահալգա-
կան զէնքայիններ և քաղաքային գործերի
վերաբերելու առեւանդների մի շարք որոշում-
ները, որոնցով ճանաչվում է զէնքայինների
ժողովները և քաղաքային դոմանների իրա-
ւունքը ընդել արտակարգ ժողովներում, քի-
տրակարի 18 ի Բարձրագոյն ցուցմունքի հա-
մաձայն, այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք
նպատակն է պետական դրութիւնը բարե-
կարգել, առանց նախապէս ստանալու նահա-
նականների թղթաւորութիւն՝ այդ հարցերը
վերոյիշեալ ժողովների պրօգրամի մէջ մտցնելու
համար:
Սեւասը բացառեց, որ ոչ միայն որ և է
ոչ-ընտրովի պաշտօնի գրաւումը, այլ և այդ-
պիսի պաշտօնի ժամանակաւոր վարումը քա-
ղաքային հասարակական վարչութեան մէջ չէ
կարելի թոյլ տալ առանց նահալգապետի
կամ քաղաքապետի համաձայնութեան:
ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 29 օգոստոսի: Կայսրուհի
Մարիա Ֆեօդօրօւնա և Մեծ Իշխան Միխայիլ
Ալեքսանդրովիչ ժամանեցին և կայարանում
զինավորվեցին իրանական թագաւորին, անգ-
լիական թագուհու և յունական թագաւորի
կողմից: Կայարանից Նոցա Մեծութիւնները
գնացին Բէրլինի մարդը:
ՏՐԻՊՈԼԻ, 30 օգոստոսի: Տիւտոնի անակ-
ցութիւնները սկսեց բանկերի դերեկտօրներին
հետ Տրիպոլիում ֆրանս-իտալական բանկ
հիմնելու առիթով՝ նաւահանգստի կառուցման
համար միջոցներ հայթայթելու նպատակով
Թիւրքիան արդէն կօնցեսիս է տուել:
ՍՕՖԻԱ, 30 օգոստոսի: Բազարական էկ-
զարխը, վերադառնալով Կ. Պոլիս, կը հասնէ
այստեղ օգոստոսի 31-ին: Պատրաստվում է
հանգիստը դիմաւորում: Թիւրքաց ներկա-
յից ցնցուցիչները իրանց ամբողջ կազմով կողո-
ւնեն էկզարխին՝ այդպիսով պաշտօնապէս հե-
րու համար Բ. Դրան և էկզարքոսութեան
մէջ և լարված յարաբերութիւնները լուրերը:

Երեւոյ համար Բ. Դրան և էկզարքոսութեան
մէջ և լարված յարաբերութիւնները լուրերը:
ԲՆՐԼԻՆ, 30 օգոստոսի: Երեւոյի հիւան-
դացողները ընդհանուր թիւը 161 է. մահվան
դէպքերը 58 են:
ԼՂՆԴՈՆ, 30 օգոստոսի: Տօկիոյ հեռագիրը
վկայում է, որ ծովագետ Տօկի Փլագմանեան
զբաւակիրը այրվեց և ջրի տակը գնաց: «Մի-
կազ» զբաւակիր հետ միասին, որի վրա ծա-
ծանվում էր Տօկի զբաւակիր, սպանվեց 599
մարդ կոմանդայից: Յայտնի չէ, թէ ինչն Տօկի
արդեօք գտնվում էր նաւի մէջ: Մանրամաս-
նութիւններ չը կան: Կարծում են, որ զբա-
ւակիրը դիպել է ստորջրեայ ականին:
Կացուրայի մինիստրութիւնը հրաժարականի
խիղիւրը տուեց, մասնագործը անելով այդպիսի
մի քայլի անհրաժեշտութեան վրա, Տօկիում
պաշարման դրութիւն մտնելու և ծագած
յուզմունքների պատճառով: Միկազն իր պա-
տասխանի մէջ խորհուրդ էր տալիս կարէն-
տին մնալ և կատարել իր պարտաւորութիւն-
ները:
Երեւոյի Տօկիում ամբողջ ց ց ց սարքից
հաշտութեան դէմ: Տեղի ունեցած ընդհա-
նում ոստիկանութեան հետ: Յիսուսից աւել
վերաւորներ կան:
Նիի-ԵՐԿ, 30 օգոստոսի: Վիտտէ ուղար-
կում է «Յէյզլը Վիլհելմ» շրջանակով:
31 օգոստոսի
Նիի-ԵՐԿ, Հաշտութեան կնքելու յիշատա-
կին Վիտտէն անկեց Վաշինգտոնի գերեզմանի
մօտ մի ծառ, որի ընծիւղները ապագայում
կուղարկվին Ռուսաստան:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Լրագրական տեղեկութիւն-
ների համաձայն, գերեզման Սվետլոյի հետ
միասին նաւթային շրջանը այցելող «Տօկոյ»
վրէժիւր լրագրի թիթեղեայ հեռագրում է
Պետրովսկից, թէ ընդհանուր ֆուտը 80 միլիո-
նից աւել է: Շատ նաւթահանքեր անֆուտ
են մնացել: 14,000 օտարաքաղաքացի հայեր
պատասպարվել են Բագու: Ռուս բանուորները
ամբողջովին թաղնվում են թուրքական մա-
սերում: «Գրաւոր» թիթեղեայ թիթեղեայ հաշտարկի
Մեղիւրսկին, «Նաւա ժիզն» թիթեղեայ խօսքով,
հեռագրված է ժողովրդական լուսաւորութեան
մինիստրութիւնից, որտեղ հայրում էր ծառա-
յութեան մէջ 32 տարի: «Մօսկովսկի Վէդո-
մօստի

